Մկրտչեան Թէրզիեանցին խրիմցի 2 ր., Յովհաննէս Բօչարեանց հին-նախիջ. 5 ր., Յակոբջան Բաղդասարով Տէռզիով 5 ր., Գասպար Մարտիրոսեան Ստանբօլցիով խրիմցի 3 ր., Գասպար Մուրադշահեանց նոր-նախիջեան. 2 ր., Աւետիք Մոլեանց վերին-ագուլեցի 3 ր., Գէորգ Կիրակոսեանց Թէլացի 1 ր., Բաղդասար Բաղալեանց Թէլացի 1 ր., Նիկոլայ Խուցեանց Թէլացի 1 ր., Առաքէլ Թումաջեանց մօզդօկցի 1 ր., Թադէոս Սարգսեանց հին-նախիջ. 2 ր., Կոստանդին Բաբայեանց հին-նախ. 1 ր., Ստեփան Մահտեսի Կարապետեանց հին-նախ. 2 ր., Յովհաննէս Մնացականեան հին-նախ. 1 ր., Ստեփան Բալասանեան Գէլոեանց հին-նախ. 2 ր., Մեսրոպ Աշարաբեանց երևանցի 3 ր., Գաբրիէլ Բաղդասարեան Խապլանեանց 2 ր., Ստեփան Մալօեանց հին-նախիջե. 1 ր., Սարգիս Սիմոնեանց հին-նախ. 1 ր., գումարն է 52 ր.

Խաչատուր Նազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շահրուր, մարտի 24-ին

Կարդալով պատուական «Մշակի» լրագրիդ մէջ այն տողերը, որ գրված են վանից, «Հայրիկ հաց, Հայրիկ հաց» մեր Շահրուր լինող քանի հայ վաճառականների գործակատարներս ցանկանալով մի քանի կոպէկ նուիրել, ահա նամակս գրելով նիրփակեալ մէկ փոխանակագիր, խնդրեմք, պ. խմբագիր, նեղութիւն կրէք Թիֆլիս ստանալ Դաւրիժեցի վաճառական պ. Օհան Տէր-Օհանովից յիսուն րուբլի թղթադրամք (50 ր.) և հասուցանէք վանայ սովեալներին խնամող Մասնաժողովին, որը հավաքված է յետագայ կերպիւ. 1878 թւից յորդորանօք պ. Գրիգոր Մահտեսի Պետրոսեանցին, մեզանից իւրաքանչիւրն պարտաւորվեց, Ջատիկ, Ջրօրհնեաց տօներին և իւրաքանչիւր ոք իւր տօնախմբութեան օրն ըստ ցանկութեան իւր մի բան նուիրել յօգուտ Թէհրանու հայոց ուսումնարանին, նոյնպէս Շահրուր եկող գնացող հայ կամ օտար ազգից ծանօթ մարդն խմբով կը տանէինք ճանապարհելու և մաղթանք կարդալով բարի ճանապարհ, «Տէր ուղղեա» ասելով փող կառնէինք նոյն նպատակաւ, որի գիրքն մինչև ներկայ թւիս հասել է 226 ղան պարսից դրամ. տեղեկանալով վանայ սովեալների դառն վիճակն, պատւելի պարոնայքն աւելի լաւ համարեցին այս փողի կէսն նուիրել սովեալներին, իսկ կէսն նրան, որի նպատակաւ ժողովեալ էին. Ահա նուիրատուաց ազգանուններն սոքա են.

Յովսէփ Նատուրեանց 50 ղան, Յարութիւն Տէր-Պետրոսեանց 36 ղ. 50 կ., Հանգուցեալ Մարտիրոս Աղամեանց 30 ղ., Դաւիթ Գրիգորեանց 15 ղ., Աւետիս Տէր-Մովսէսեանց 16 ղ., Թուման Հախումեանց 7 ղ., Գրիգոր Ասրիեանց 10 ղ., Համբարձում Յարութիւնեանց 5 ղ., Մովսէս Առնեանց 5 ղ., (դաւրիժեցիք) Յովհաննէս Աղաեանց 20 ղ., Գրիգոր Մահտեսի Պետրոսեան 15 ղ., Աստուածատուր Մահտեսի Աստուածատուրեանց 10 ղ., (ագուլեցիք) Գասպար Աղամիրզաեանց 12 ղան Յակոբ Մալիեանց 5 ղ., Խրիստափոր Արեանց 5 ղ., Թոմաս Արեան 2 ղ., (Շուշեցիք) Եանարէկ Թահերով 10 ղ., Միր Մէջիդ 2 ղ. 50 կ., (Շամախեցի Սավզար հաջի Թաղիեվ 10 ղ., գումարն է 266 ղան որից կէսը 133 ղան հասցրած եմք Թէհրանու հայոց ուսումնարանին, իսկ մնացեալ կէսն 133 ղան, որ լինի 50 րուբլի թղթադրամին, փոխանակագիրն ձեզ գրկելով, խնդրեմք ստանալով գրկէք ուր հարկն է. Ի գիտութիւն նուիրատուաց խնդրեմ երկտող գրածներս պատուական լրագրիդ մի անկիւն շնորհէք.

Յարութիւն Տէր-Պետրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Գրիգոր Արծրունի չը կարդաց իր դասախօսութիւնը մայիսի 26-ին, որովհետև Թիֆլիսի հասարակութիւնը կատարելապէս անտարբեր գտնվեցաւ դէպի այդ դասախօսութիւնը. Այն մի քանի անձինք, որոնք տոմսակ են վեր առել, կարող են իրանց փողը յետ ստանալ Արծրունու Թատրոնի կասսայից.

—

Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը «Սովի մասին Հայաստանում» մենք կը տպենք «Մշակի» մէջ, որպէս բանասիրական. Եթէ այդ յօդուածով չը հետաքրքրվեցան Թիֆլիսցիները, մենք հաւատացած ենք որ գաւառացիների համար դա հետաքրքրելի կը լինի. Վաղուց է որդէն մենք մեզ համար համոզմունք ենք կազմել և այժմ աւելի էլ հաստատվում է մեր համոզմունքը, որ մեր ամբողջ գործունէութիւնը և նոյնպէս «Մշակի» հրատարակելը միմիայն գաւառների մէջ արձագանք է գտնում.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Փարիզի սօցիալիստներից մտադրված տօնը ի պատիւ կօմունայի չափազանց անաջող անցաւ: Յայտնի է, որ սօցիալիստները սպառնում էին կառավարութեանը, որ այդ օրը 50000 մարդ կը հաւաքվի, մինչդեռ Բաստիլիայի հրապարակի վրա միայն 600 մարդ հաւաքվեցան և այն էլ ոչ թէ միասին, այլ առանձին խումբերով, որոնք մէկը միւսի ետևից ուղևորվեցին Père Lachaise գերեզմանատունը և դափնի պսակներ դրին այն պատի մօտ, որտեղ 1871 թուին, մայիսի 23-ին հրացանի առնվեցան այդ գերեզմանատունը գրաւող կօմունարները: Պօլիցիան անդադար հրաւիրում էր ամբոխին չը կանգնել և 13 մարդ, որոնք չը կամեցան կատարել պօլիցիայի հրաւէրը, կալանաւորվեցան: Կալանաւորված այդ մարդկերանցից եօթը հօգի զանազան ազգութիւններին պատկանող օտարականներ էին: Դրանց կալանաւորելու պատճառով պատգամաւորների ժողովի արմատական կուսակցութեան մի քանի անդամներ մտադիր են կառավարութեանը հարց առաջարկել: Ներքին գործերի նոր մինիստր պ. Կոնստան յայտնել է, որ այդ հարցին նա անմիջապէս պատասխան կը տայ: Սրանից երևում է, որ մինիստրը հաւատացած է, թէ պատգամաւորների ժողովի անդամների մեծամասնութիւնը հաւանութիւն կը տայ կառավարութեան կարգադրութեանը:

Այդպիսով Ֆրէյսինէի մինիստրութիւնը կարողացաւ հեռացնել իրան պատահելի դըժուարութիւններից մէկը: Ֆրանսիական արմատականների մեծամասնութիւնը հասկացաւ, որ այժմ անյարմար է փողոցային անկարգութիւններ անել, որովհետև հանրապետութեան թշնամիները և եզուիտները բոլոր ջանքերով աշխատում են անկարգութիւններ ծագեցնել, յուսալով, որ կառավարութիւնը ստիպված կը լինի ընդդիմադրել այն անկարգութիւններին և չի համարձակվի փակել հոգևոր միաբանութիւնների ուսումնարանները, իսկ այդ ուսումնարանների փակելու ժամանակը հասնում է: Նրանց պահպանողական անուանոց կղերականները, որոնք բացարձակ յայտնում են իրանց ցանկութիւնը այժմեան կառավարութեանը իշխանութենից զրկելու մասին, ստիպված կը լինեն միայնակ գործել, չը յուսալով 1871 թուականի կօմունարների օգնութեան վրա:

Յայտնի է, որ Ֆրանսիական սենատի նախագահ պ. Մարտել հրաժարական է տուել և շուտով նրա փոխանորդի ընտրութիւնն է լինելու: Այդ ընտրութեան ժամանակ կղերականները առաջին անգամ կը փորձեն իրանց ոյժերը: Սենատի անդամների սկզբնական ժողովների ժամանակ երկու կանդիդատներ ընտրվեցան՝ հանրապետականների կողմից Լէօն Սէ, իսկ միապետականներից կողմից Ժիւլ Սիմօն: Այս վերջինին կանդիդատ ընտրելը մի տեսակ բողոք է կառավարութենից մարտ ամսին արած կարգադրութիւնների դէմ, որոնք հակառակ էին սենատին, որովհետև նա մերժեց մինիստր Ժիւլ Ֆերրիի օրէնքի 7-դ յօդուածը: Ժիւլ Սիմօնի կանդիդատ ընտրվելու այդ բնաւորութիւնը ի նկատի ունենալով, պէտք էր ենթադրել, որ նա ընտրութիւնների ժամանակ ձայների մեծամասնութիւն կը ստանար, բայց նորերումս եկած տեղեկութիւններից երևում է, որ 7-դ յօդուածին հակառակ քուէ տուող չափաւոր հանրապետականները, այժմ համաձայն են Լէօն Սէին քուէարկել: Այսպիսով կարելի է հաւատացած լինել, որ հանրապետականների կանդիդատը ներկայ ընտրութիւնների ժամանակ կարող է յաղթող հանդիսանալ:

Հանրապետականները բաւական դժուարութիւնների հանդիպեցան, մինչև կարողացան Ժիւլ Սիմօնին մի հակառակորդ գտնել: Յայտնի է, որ Լէօն Սէ Ֆրանսիական դեսպան էր նշանակված Լօնդօնում և նրա գլխաւոր նպատակն էր բանակցել անգլիական կառավարութեան հետ առևտրական նոր դաշնագրի մասին: Լէօն Սէ Ֆրանսիական սենատի նախագահութիւնը ընդունելով, ստիպված կը լինի թողնել դեսպանի պաշտօնը: Լէօն Սէյի յաղթութիւնը մի ծանր հարուած կը լինի պահպանողականների համար: Այդ հանգամանքը կապացուցանի, որ պահպանողականները սենատում անգամ չեն կարող մեծամասնութիւն ունենալ, երբ ցանկութիւն կը յայտնեն ոչնչացնել հանրապետութիւնը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի: Այսօր հասաւ այստեղ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչ: Իսկոյն կատարվեցաւ Աստուծոյ կամքով վախճանված Կայսրուհու մարմնի Պետրոպավլովսկի եկեղեցին տեղափոխելու հանդէսը: Հանդիսին ներկայ էր գերմանական Թագաժառանգը: Դեսպանների կօնֆերենցիայի գումարվելը Բեռլինի մէջ նշանակված է յունիսի 16-ին:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

քաց թշնամի ռուսաց կողմը դիմող հայերի վրէժը մնացած հայերի վրա թափել. Այդ միջոցին քրդերը գործ դրեցին իրանց բոլոր անգթութիւնները, և զանազան տեղերում սկսվեցաւ սոսկալի կոտորածը…

—Ես մինչև այսօր համոզված եմ, և եթէ ժողովուրդը իր տեղից չը շարժվէր, կարող էր պաշտպանվել. Թուրքաց կանոնաւոր զօրքերը, շատ հասկանալի է, որ չէին յարձակվի հնազանդ և խաղաղ ժողովրդի վրա. Տեղային իշխանութիւնը մինչև այդ աստիճան ակներև բարբարոսութիւն չէր անի, մանաւանդ, որ այդ ժամանակ Ալաշկերտի և Բայազէդի կողմերում կային անգլիական ագէնտներ և եւրոպական լրագրների թղթակիցներ. Տեղային իշխանութիւնը կանէր այն, ինչ որ արաց.—Այսինքն՝ ծածուկ քրդերին կը գրգռէր հայերի դէմ և ինքը մասների միջից կը նայէր գործվող բարբարոսութիւնների վրա. Բայց քրդերի դէմ պաշտպանվելը շատ դժուար չէր լինի. Մի փոքրիկ, բայց խիստ նշանաւոր դէպք կապացուցանէ, որ իմ ենթադրութիւնը սխալ չէ. Ես համառօտ կերպով կը պատմեմ քեզ.

—Գաղթականութիւնից յետոյ, երբ ռուսաց զօրքերը բոլորովին թողեցին Բայազէդի և Ալաշկերտի գաւառները, այսինքն, երբ այդ երկրները կրկին անցան Թուրքաց ձեռքը,—այն ժամանակ, որպէս պատմեցի, քրդերը սկսեցին կողոպտել, կոտորել և տանջել մնացած հայերին. Այդ միջոցին մի քանի հարիւր ընտանիք թողեցին իրանց բնակութիւնները և ամրացան լեռների մէջ. Երևակայեցէք, մի քանի հազար քրդեր, մի քանի շաբաթ շարունակ կռվում էին այդ մի բուռն քաջերի հետ, որոնք ոչ միայն յանձն չառեցին անձնատուր լինել, այլ մի քանի յաջող յարձակումներ գործելով, կարողացան խլել թշնամուց հարուստ աւար և պատերազմական պատրաստութիւններ. Իմ սիրտը և այս րոպէիս թնդում է մի անսահման ուրախութեամբ, երբ մտաբերում եմ այն անմոռանալի օրերը. Կռվում էին ոչ միայն երիտասարդները, այլ և ծերերը, այլ և կիները. Ես այժմ համոզված եմ, որ ստրկութիւնը չէ կարող խլել մի ժողովրդի քաջութիւնը, որ նախնիքը թափել էին նրա երակների մէջ. Ստրկութիւնը կարող է միայն ժամանակաւորապէս ճնշել և խեղդել քաջազնական ոգին, բայց սպանել—ոչ. Զարկեց յաջող ժամը, նա կրկին կը զարթնի իր վաղեմի ուժով և աւելի սաստիկ զօրութեամբ. Ես այդ տեսայ իմ աչքով. Եւ միակ ուրախալի երևոյթը, որ վերջին աղէտների մէջ կարող է մխիթարել մեզ,—այդ է.

Վարդանի մռայլված դէմքը փոքր ինչ պայծառացաւ և նա իր տխուր աչքերը ուղղեց դէպի վեր, կարծես, աղօթում էր, կարծես, փառք էր տալիս վերին Նախախնամութեանը.

—Ի՞նչով փրկվեցաւ, հարցրեց նա.

—Երկար պաշարվիլ անմատչելի լեռների մէջ, թէև շատ դժուար, բայց դարձեալ կարելի էր, եթէ մենք գործ ունենայինք միայն քրդերի հետ. Բայց շուտով պաշարեցին մեզ կանոնաւոր զօրքեր. Այդ վերջիններին նոյնպէս կարելի էր ընդդիմադրել. մեր կողմն էր մի անընկճելի զօրութիւն,—Հայաստանի լեռները, որ այնքան խորհրդով պահում են իրանց մէջ պաշտպանողներին. Բայց պաշարի և ուտեստի պակասութիւնը վրա հասաւ, որպէս մի թշնամի, որին յաղթել անկարելի էր. Թէև երբեմն գիշերով մերայինք իջնում էին լեռներից, և յարձակվելով քրդերի մերձակայ գիւղերի վրա, պաշար էին բերում, բայց այդ խիստ սակաւ անգամ յաջողվում էր, աւելի այն պատճառով, որ քրդերի գիւղերը դատարկ էին և բնակիչները իրանց անասունների հետ գնացել էին հեռաւոր արօտատեղիներում. Ի հարկէ, մեր դըրութիւնը երկար շարունակվել չէր կարող, երբ մեր շրջակայքում չէր մնացել ոչ մի հայաբնակ գիւղ, որտեղից կարողանայինք օժանդակութիւն գտնել, գոնէ պաշարի կողմից. Բայց թշնամին հետզհետէ մօտենում էր. Այդ ժամանակ մերայինք կատարեցին մի հրաշալի քաջագործութիւն. Մի գիշեր, պատառելով պաշարող շղթան, անցան թշնամու ահագին բանակից. Երևակայեցէք, որ դրանք կռվող տղամարդիկ չէին միայն, որոնց համար լինէր մի այս տեսակ յանդուգն ձեռնարկութիւն, այլ իրանց հետ ունէին ամբողջ ընտանիքներ, կին, աղջիկ և երեխաներ.

—Յետոյ ո՞ւր գնացին, հարցրեց անհամբերութեամբ Վարդանը.

—Անցան Թուրքաց սահմանից և գնացին Պարսկաստան. Բայց ճանապարհին ոչ սակաւ վտանգների դէմ ստիպված էին պատերազմել.

—Ուրեմն դու Պարսկաստանից եկար այստեղ.

—Այո, Պարսկաստանից.

—Այժմ դու ի՞նչ դիտաւորութիւն ունես այստեղ, հարցրեց Վարդանը.

—Ես միայն մէկ դիտաւորութիւն ունեմ, և կարծեմ, դու էլ կը համաձայնվես ինձ հետ, պատասխանեց Մելիք-Մանսուրը, աւելի լուրջ դէմք ընդունելով.—Պէտք է աշխատել, որ այստեղ եկած գաղթականների կեանքը պահպանվի և նրանք խուսափեն այն ոչնչացման քաղցածութիւնից և հիւանդութիւնից. Ես հաւատացած եմ, որ ռուսները կը հաւաքեն իրանց ուժերը և կրկին կը տիրեն թողած երկրները. Այն ժամանակ այն կողմերում խաղաղութիւն կը տիրէ, և այն ժամանակ պէտք է աշխատել, որ ալաշկերտցիք և բայազէդցիք վերադառնան իրանց հայրենիքը. Եթէ ոչ, Հայաստանի ապագայի համար մեծ դժբախտութիւն կը լինի, եթէ այդ երկու սահմանակից գաւառները, որպէս են Ալաշկերտը և Բայազէդը, բոլորովին կը դատարկվեն հայերից և նրանց տեղը կը բռնեն վայրենի քրդերը.

—Դու կարծում ես, որ այդ գաւառները միշտ ռուսաց ձեռքը կը մնան.

—Դիցուք թէ պատերազմից յետոյ, երբ խաղաղութեան դաշինք կը կապվի, այդ գաւառները կրկին կանցնեն Թուրքաց ձեռքը. Բայց այն ժամանակ, ես հաւատացած եմ, որ հանգամանքները կը փոխվեն, և միւսանգամ չեն կրկնվի այժմեան անկարգութիւնները.—Ջարդված Թուրքը խելքը գլուխը կը հաւաքէ… Ես դեռ մի ուրիշ յոյս էլ ունեմ…

Այդ միջոցին ներս մտաւ պառաւը, յայտնեց, թէ մի օտարական քահանայ խնդրում է տեսնել Վարդանը մտածելով, թէ դա Յովհաննէս հայր սուրբի խոստացած քահանաներից մէկը պէտք է լինի, հրամայեց ներս թողնել.

Յայտնվեցաւ Օ… գիւղի քահանայ Տէր-Մարուքը.

(Կը շարունակուի)